ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.09.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/51

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ՝ ֆինանսների նախարարության 29.08.2017թ. թիվ 03/26-3/15733-17 գրությամբ «Պրոֆի Ֆուլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2785 գրության հիման վրա, 29.08.2017թ. թիվ 03/26-3/15733-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Պրոֆի Ֆուլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Պրոֆի Ֆուլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 30.08.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/15798-17 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Պրոֆի Ֆուլ» ՍՊԸ-ին, սակայն Ընկերության կողմից գրավոր կարծիք չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 05.09.2017թ. ժամը 11:10-ի նիստի վերաբերյալ, ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ով միջնորդել է Խորհրդին՝ տրամադրել հավելյալ ժամանակ գործով առկա նյութերը ուսումնասիրելու և դիրքորոշում ներկայացնելու համար:

Խորհուրդը բավարարել է Ընկերության միջնորդությունը՝ վերջինիս տրամադրելով մեկ շաբաթ ժամանակ:

Խորհրդի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ Ընկերության կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2785 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Շինանյութի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի արդյունքում մի շարք կազմակերպությունների կողմից խախտվել են ստանձնած պարտավորությունները, մասնավորապես՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան եզրակացության համաձայն՝ «Պրոֆի Ֆուլ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում առկա պարտավորությունները գերազանցում են ակտիվներին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 05.09.2017թ. ժամը 11:10-ի նիստի վերաբերյալ, ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2017/51 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2017/51 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Շինանյութի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով «Պրոֆի Ֆուլ» ՍՊԸ-ն 10.03.2017թ. հայտ է ներկայացրել:

2. Ընկերությունը հայտի թիվ 3.3 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «բ» կետով հայտնել և հավաստել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին ուղղված ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 20.05.2017թ. կատարված հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Պրոֆի ֆուլ» ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 24.05.2017թ. տրամադրվել է եզրակացություն, որի համաձայն՝ ***Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային***

արժեքը կազմում է՝ 266 292 091 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 346 430 602 ՀՀ դրամ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.07.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը, «Պրոֆի ֆուլ» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

5. **<u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>**

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.08.2017թ. թիվ 03/26-3/15733-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2785 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:***

Նույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ ***մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:***

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ Մասնակիցների՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից ***հայտը ներկայացվելուն նախորդող՝***

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը.

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Այսպես, «Պրոֆի ֆուլ» ՍՊԸ-ն «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտի թիվ 3.3 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «բ» կետով հայտնել և հավաստել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին ուղղված ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 20.05.2017թ. կատարված հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Պրոֆի ֆուլ» ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 24.05.2017թ. տրամադրվել է եզրակացություն, որի համաձայն՝ ***Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմում է՝ 266 292 091 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 346 430 602 ՀՀ դրամ:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.07.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը, «Պրոֆի ֆուլ» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

Այսպիսով՝ Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից հայտի թիվ 3.3 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված կեղծ տվյալի ներկայացում, քանի որ Ընկերության հայտը ներկայացվելուն (2017թ.) նախորդող հաշվետու տարվա (2016թ.) ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը ***(346 430 602 ՀՀ դրամ)*** գերազանցել է ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը ***(266 292 091 ՀՀ դրամ):***

Միաժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից Խորհրդի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Պրոֆի ֆուլ» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***վերջինիս վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում «Պրոֆի ֆուլ» ՍՊԸ-ն մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Պրոֆի ֆուլ» ՍՊԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ ***Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը,*** քանի որ սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ չկա որևէ տեղեկատվություն «Պրոֆի ֆուլ» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 10.03.2017թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ:

«Պրոֆի ֆուլ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ ***խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի*** ի հայտ գալու պայմաններում:

Հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 29.08.2017թ. թիվ 03/26-3/15733-17 գրությամբ ներկայացված «Պրոֆի ֆուլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 29.08.2017թ. թիվ 03/26-3/15733-17 գրությունով «Պրոֆի ֆուլ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03017953) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ